ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 16 հոկտեմբերի 2014 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի

Ա. Խաչատրյանի

Քննության առնելով քաղաքացիներ Դվին Իսանյանսի եւ Արտակ Զեյնալյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացիներ Դվին Իսանյանսը եւ Արտակ Զեյնալյանը 2014թ. սեպտեմբերի 26-ին դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«1. ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18, 19, 20, 3, 14.1-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր,

2. ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «վճռաբեկ բողոքին կցվում են … վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը)» դրույթը՝ «վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը)» մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 18 եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1. Դիմողները գտնում են, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 18, 19, 20-րդ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» ենթակետին, քանի որ բացառում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրենց անունից անձամբ կամ իր ընտրած անձի միջոցով վճռաբեկ բողոք բերելու հնարավորությունը:

Դիմողների կարծիքով՝ սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթները չեն ապահովում և պաշտպանում դիմողների՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 5, 6, 14.1, 18, 19, 20, 83.5, 91-րդ հոդվածներով և 101-րդ հոդվածի 7-րդ ենթակետով ամրագրված և երաշխավորված իրավունքները:

2. Դիմումի եւ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողներից՝ Արտակ Զեյնալյանը դատարաններում չի հանդիսացել որպես դատավարության կողմ, ուստիեւ չկա նրա նկատմամբ կայացված վերջնական դատական ակտ, հետեւաբար, նա օժտված չէ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավունքով:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարան դիմելու կարգի սահմանումը: Այդ հոդվածի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Այսպիսով, կարելի է փաստել, որ առկա է անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը՝ Արտակ Զեյնալյանի մասով, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմք:

3. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավակարգավորման համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ովքեր բողոքը ներկայացնում են փաստաբանի միջոցով:

Դիմումի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասով քննության ընդունումը մերժելու հիմքեր առկա չեն, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը 2014 թվականի հուլիսի 23-ի ՍԴԴԿՈ/1-11 որոշմամբ քաղաքացի Արա Սարգսյանի 09.07.2014թ. դիմումի հիման վրա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործն ընդունել է վարույթ եւ 2014թ. հուլիսի 24-ի ՍԴԱՈ-35 աշխատակարգային որոշմամբ քննության օր է նշանակել ս/թ դեկտեմբերի 9-ը: Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջներով, խնդրո առարկա դիմումը նշյալ հոդվածի մասով կարելի է միավորել վերոնշյալ գործին:

4. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ դիմողի կողմից բողոքարկված 158-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ վճռաբեկ բողոքին, ի թիվս այլնի, կցվում է նաեւ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասով դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր առկա չեն, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 2-րդ կետով, 27-րդ, 39-րդ հոդվածներով եւ 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը քաղաքացի Արտակ Զեյնալյանի մասով մերժել:
2. Քաղաքացի Դվին Իսանյանսի մասով անհատական դիմումի հիման վրա գործն ընդունել քննության:
3. Առաջարկել անհատական դիմումի հիման վրա գործը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասով միավորել ՀՀ սահմանադրական դատարանում 2014 թվականի հուլիսի 23-ի ՍԴԴԿՈ/1-11 որոշմամբ քննության ընդունված՝ քաղաքացի Արա Սարգսյանի դիմումի հիման վրա՝ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի հետ:

4. Քաղաքացի Դվին Իսանյանսին ազատել պետական տուրքի վճարումից:
5. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

16 հոկտեմբերի 2014 թվականի
ՍԴԴԿՈ/2-15